

Հ.Ա.Բ.Հ.
ԱՌԱՋՈՂՈՎԱԾ

Խ 11 ԱԵՆ-ԼԻՆ ԱՎԵԳՐԵՐԻ Խ 11

ԿԱՏԱՂՈՒԹՅԱՒՆ
(ԶՐԿԱՄԱՆՈՒԹՅՈՒՆ)

Հ.Ա.Բ.Հ. ՑՈՎՔՐՈՒԹՅԱՆ

616.9
4-28

19. ՊԵՏՀՐՈՎԱ 31

===== ՀԱՐԵՎԱՆ =====

30 JUL 2010

ՀԱԽԵ ԱԹՎԱՋԿԱՐԱԾ
№ 11 ՍԱՆ-ԼՈՒՍՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 11

616.9

4-28

۱۰۷

ԿԱՏԱՂԻԹՅՈՒՆ

(ՀՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ)

902 1464
38

902 38
3

ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ



ՅԵՐԵՎԱՆ - 1931

ԿԱՏԱՂՈՒԹՅՈՒՆ

Կատաղությունը վարակիչ հիմանդրություն
եւ առաջ ե գալիս կատաղած կենդանիների
կծելուց :

Կենդանիներից, ամենից շատ կատաղում
են չները կատուները, բայց հաճախ կատա-
ղում են և տնային ուրիշ կենդանիներն եւ՝ որի-
նակ՝ ձին, վոչխարը, խոզը, կովը, թռչուննե-
րը և այլն։ Վայրենի կենդանիներն ել կարող են
կատաղել, ինչպես որինակ՝ գայլը, աղվեսը,
վողնին, մուկը և այլն։

ԻՆՉ ՆՇԱՆՆԵՐ ՈՒՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԱՏԱՂՈՒԹՅՈՒՆԸ

Կենդանիների կատաղությունը յերկու տե-
սակ ե լինում՝ խաղաղ և մոլեգին։ 100 կատա-
ղած չներից 80-ը մոլեգին են, իսկ 20-ը խա-
ղաղ։ Կատաղությունից մի յերկու որ առաջ
հայտնվում են հիվանդության նշանները։ շունը
տիսուր և միենույն ժամանակ անհանդիստ-
նա աշխատում ե առանձնանալ, տիրոջ կանչը
համարյա թե չի լուս, անից փախչում ե, ու-
տելը դեռ չի խանդարված, թեև ոհածությամբ
և ուտում։ բացի դրանից նա յերբեմն ազահու-

ՊԵՏՀՐԱԾԻ ՏՄԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ № 146
ԳՐԱԼԵՐԴԱԽՎԱՐ 2873 (Բ)
ՏԵՐԱԺ 4000

թյամք կուլ և տալիս վոչ ուտելու իրեք՝ հարդ շորի կտորներ, ածուխ, խոտ և այլն:

1—2 օրից հետո սկսվում է իսկական հիվանդությունը. կատաղած շունը հարձակվում է ամենքի և ամեն բանի վրա. յերեխ նա ամենուրեք թշնամիներ և տեսնում և աշխատում. և պաշտպանվել նրանցից. հարձակվում է մարդկանց վրա, ուրիշ կենդանիների և թըռչունների վրա:

Կատաղած շունը ջրից ամենեվին չի վախենում, մինչդեռ մարդիկ՝ ընդհակառակը կատաղած գրության միջոցին ստոտիկ փրփռնում են ջրից, կատաղած մարդը ջուրը տեսնել անդամ չի ուզում:

Այս գրությունը առկում է 2—4 որ և դա ամենավտանգավոր ըրջանն է, վորովհետեւ սովորաբար կատաղած շունը անից փախչում է, սկսում է հարձակվել և կծել ում պատահում է: Հայտնիում են լուծանքները՝ ստորին ծնոտը քարշ և ընկնում, բերանից փրփուր, թուք և հոսում, քայլվածքը յերերուն է, յետել վոաները քարշ և տալիս, չնչառությունը խանգարված, վերջիմերջո հիվանդ շունը պառկում է և սատկում: Հիվանդությունն ընդամենը տելում 5—8 որ, յերեմն և 10—12 որ:-

Այսպես և ընթանում կատաղության մոլեգին տեսակը:

Խաղաղ կտորագության դեպքում՝ շունը հանգիստ է, կուլ տալը խոնդարված, վոչ ու-

տում է, վոչ խմում և բերանից հոսում է փրբ-փուք:

Եյս գրության մեջ շունը չի հարձակվում, ուրիշի վրա, բայց կկծի, յեթե չարչարեն:

Յերբեմն հիվանդ շունը չառ հեղ է, լի-զում է տիրոջ ձեռքերը և վոչ վոք չի կասկածում, վոր շունը կատաղած է. այդ տեսակ շունն ավելի վտանգավոր է, լիզելով նա կարող է ան-նկատելի կերպով վարակել տիրոջը, յեթե այս վերջինի մաշկի վրա կա մի վորեե բերծվածք կամ ճանդովածք:

Ուրիշ կենդանիների կատաղությունը շատ նման է շան կատաղությանը:

Բոլոր գեղքերում ել այս հիվանդությունն անպայման վերջանում է մահով:

Ի՞՞ՆՉ ՆՇԱՆՆԵՐ ՈՒՆԻ ԿԱՏԱՂՈՒԹՅՈՒՆԸ

Հիվանդանալուց 2—3 որ առաջ վարակ-վածը զգում է, վոր իրեն հետ մի ինչ վոր ար-տասալոր բան և պատահել. նա անհանգիստ է, տիրուր է, դյուրագրգիռ և լավ չի քնում: Յեր-բեմն նրա աչքին զանազան պատկերներ են յե-րեվում:

Հիվանդությունը գնալով զարգանում է, դրան զուգընթաց անհազստությունն ել շատա-նում է, քունը փախչում է, կուլ տալը դժվա-րանում: Հիվանդն առայիկ ևս չի կարողանում կուլ տալ ջուրը. մինչեւ անդամ ջրի սոսկ տեսքն առաջնացնում է սանդանքներ և հիվանդն ան-կարող է կատարել կուլ տալու շարժումները,

որինակ՝ թուքը կուլ տալը։ Զրի մասին յեղած սոսկ խոսքն անդամ կարող է առաջացնել սանգանքներ, այդ պատճառով ել հիվանդությունը կոչվում է ԶԻՎԱՍԽՈՒԹՅՈՒՆ։

Եթե հետեւանք թուքը կիսվում է հիվանդի բերանի մեջ, շարունակ թքում է կամ թուքըն անդադար հոսում է բերանից։

Հիվանդի գիտակցությունը տեղն է. սակայն նա հաճախ արտասանում է անկապ խոսքեր, անհանգիստ շարժումներ և դործում, փորձում և փախչել տնից։

Յեթե ուժ գործ գնեն, հիվանդը կարող է հարձակվել ու կծել շրջապատզներին։

Ի՞նչի՞ն է ԱՄԱԿ. ԳԱԼԻՍ ԿԱՏԱՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես ասացինք, այդ հիվանդությունը վարակիչ է և առաջ է դալիս մի վորեե կատաղած կենդանու (շան, դալի, կատի) կծելուց։

Հայտնի յեն, վոր վարակիչ հիվանդություններն ունեն իրենց մանրեները, վորոնք հասարակ աչքով անտեսանելի յեն։

Կատաղությունն ել, վորպես վարակիչ հիվանդություն, ունի իր հարուցիչ մանրեն, վորը մինչեւ այժմ դանված չեն, բայց լավ հայտնի յեն նրա հատկությունները։

ՎՈՐՈՆՔ ԵՆ ԿԱՏԱՂՈՒԹՅԱՆ ՎԱՐԱԿԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) Վարակը գտնվում է կատաղած կենդանու կամ մարդու ուղեղի (գլխի և վողնուղեղի) մեջ, թքի մեջ. արյան մեջ չկա։

2) Վարակն անցնում է կատաղածից սողողին վոչ թե արյան, այլ ներգերի միջոցով։

3) Վորքան մոտ է կծած տեղը գլխին, այնքան վտանգավոր է հիվանդությունը։

4) Ողի միջոցով վարակը չի տարածվում. ուտելիքի և խմելիքի միջոցով չի անցնում նու, յեթե բերանի մեջ կամ ձեռքերի վրա քերծածքներ չկան։

5) Տաքության բարձր աստիճանը սպանում է այդ թույնը. որինակ՝ յեթե կատաղած շան ուղեղը սրսկենք առողջ կենդանուն, մի քանի որից հետո այս կենդանին նույնպես կրկատաղի, բայց յեթե յեռացնենք ուղեղն ու հետո սրսկենք, այն ժամանակ կենդանին չի հիվանդանա։

6) Թույնն անցնում է առողջին մարմնի մի վորեե ճանգովածքից կամ կծած վերքից, ուստի մարմնի բաց տեղերի կծած վերքն ավելի վտանգավոր է, քան շորով ծածկած տեղի վերքը։

7) Վարակը հիվանդից առողջին չի անցնում շփման միջոցով, յեթե հիվանդը չկծի առողջին կամ նրա թուքը ընկնի առողջի մի վորեե վերքի վրա։

8) Կատաղած կենդանու թուքը վարակիչ է հիվանդությամբ բռնվելուց մոտագրապես 1/4 որ առաջ։

9) Հիվանդ կենդանու միուր վտանգավոր չե. միուր չի պարունակում վարակ։

10) Կատաղած կենդանու կաթի մեջ կա կատաղության վարակ:

11) Սատկած կենդանու ուղեղն ևս պարունակում է թույն:

ՅԵՐԲ Ե ՀԱՅՏՆՎՈՒՄ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Կատաղած շան կծելուց մարդ կարող է հիվանդանալ առաջին յերեք ամսվա ընթացքում. յերեք ամիս անցնելուց հետո սակալ են հիվանդության դեպքերը. յերեխաներն ավելի շուտ են հիվանդանում, քան հասակավորները. չներն ավելի ուշ՝ քան մարդը. վորքան մեծ է կենդանին, այնքան ուշ է հիվանդանում և ընդհակառակը՝ վորքան փոքր են կենդանին, այնքան շուտ է հիվանդանում:

Հիվանդության վաղ կամ ուշ հայտնվելը կախում ունի նրանից, թե մարմնի վորտեղն է կծած. յեթե գլուխն է կծած, շուտ են հիվանդանում, յեթե ձեռքերն են՝ ուշ, խոկ յեթե վոտներն են՝ կծած, այն ժամանակ ավելի ուշ են հիվանդանում:

Հիվանդության վաղ կամ ուշ հայտնվելը կախում ունի վերքի խոր լինելուց: Խոր վերքերն ավելի վտանգավոր են, քան մակերեսայինները:

Հիվանդության հայտնվելը կախում ունի կծող կենդանուց. տափակ առամներ ունեցող կենդանու կծածն այնքան ել վտանգավոր չե, վորքան սուր ժանիքներ ունեցողինը. որինակ՝ վայլի կծածից ավելի շուտ են հիվանդանում, քան շան. կատվի կծածից՝ ավելի ուշ:

ԿԱՏԱՂԱԹՅԱՆ ՀԱՅՑՐԱԾ ՎՆԱՄՆԵՐԸ

Քանի հայտնի չեր բժշկության մեջ, կատաղած կենդանիների կծածից շատերն եյին մահանում. հիվանդների 35-50% մահանում ել, բժշկության ձեւ զտնվելուց հետո այս 9/10-ը խիստ պակասոց:

ԽՍՀՄ-ի մեջ տարեկան մոտ 50.000 մարդու կծած են կատաղած կենդանիները. այս թվից պարզ է, թե վորքան նյութական վնասներ և առաջանում կատաղած կենդանիների կծելուց, վորքան բանվորական որ են կորցնում հիվանդները բժշկության համար, վորքան ծախք և նստում:

Բացի վրանից չոլետք և մոռանալ և այն հանդամանքը, վոր կծածներն ավելի շատ են զարնանը և աճառը, այսինքն՝ գյուղատնտեսության ամենայերան ժամանակ:

Յեթե յեթե ի նկատի ունենանք, վոր յուրաքանչյուր կծածն առնվազը կորցնում է թժ շկութայն համար 12-21 որ, այն ժամանակ հասկանալի կլինի, թե վորքան մեծ և մեր պիտության կրած նյութական վնասը կատաղության պատճառով:

Ի՞ՆՉՊԵՍ ՎԱՐՎԵԼ ՅԵՐԲ ԿԱՏԱՂԱԾ ՇՈՒՆԸ ԿԾԵԼ Ե

Կատաղած կենդանու կծելուց հետո (շան, գայլի, կատվի և այլն) պիտք է առանց հետաձգելու կծածին տանել Պաստերյան կայանը, վորտեղ կատաղության դեմ սրսկումներ են անում:

Ե՞՞Չ Ե ՊԱՍՏԵՐՅԱՆԵ ԿԱՅԱՆՔ

Սբանից 40 տարի առաջ Պատեր ահաւանիքի Փրանսացի գիտական զամավ, վոր կատաղությունը կարելի յէ կանխիւ, որովհետով կը ծածին կատաղության թուլացրած թաւինք:

Մենք գիտենք, վոր կատաղության թուլացնը, պարսկը, գլխավարապես զամավում և կատաղում կենդանու գլխի և գլղնուղեղի մեջ Կատաղության թուլացրած վարակված և մեռած կենդանու վաղնուղեղը հանում են ու չորացնում: Մրգպես չորացրած ուղեղը քանի թարձի, քանի նու տակալիքին լավ չե չորացած, վը տանգագործ ե, նու վարակիչ ե: Իսկ մի վորոշ ժամանակից հետո այդ ուղեղը վատնուղար չե այլեւ:

Պատերի փորձերը ցույց են տիեզ, վոր կատաղում կենդանու ուղեղը 14 որ չորացնելուց հետո սրսկելիս այլին չի վարակում, այսինքն՝ կատաղության չի առաջացնում:

Փորձերն ապացուցեցին նաև, վոր Յ-որյա չորացրած ուղեղը վարակիչ ե:

Պատերը, սրսկելով իր որսկումները 14 որվա չորացրած ուղեղից, առողջունաբար իշխավ և հասավ Յ որյա չորացրած ուղեղին և ի՞նչ զտավ. զտավ այն, վոր աստիճանաբար իջնելով չորացած ուղեղից թարմին՝ կարելի յէ պաշտպանել կենդանուն և թուրմ ուղեղի վարակից:

Ան թե վորքոն մեծ դյուռ և Պատերի գտածը:

Տարիների ըսթացքում ուղեղի ուստրառաւ ձեր կատարելագործեցին, սրսկումները նու բակես:

Պատերի գաղափարը բայց տարածում ունեցավ յերկրագնդի բոլոր մասերում. և այն Հիմնարքությունները, վորակ կատաղության մինչնինիքին անգումահատում են, չոնում են վազնակեղեցը, չորացնում և պատվագանում ու հիմնակներին, կատաղության մինդանների կծածների դեմ բժշկում, կոչվում են Պատերյան կայսն, ի նշան յերախոսագիտության զեկի այն գիտնականը, վորն իր դյուռով մեծ բարիք և արել կատաղության մինդանների կծածներին: Մրգպիս մի կայսն հիմնված է Յերեկոնում Սան-Հեղիների ինուխուստին կից:

ՅԵՐԵԿՈՆ ՊԿԱՆԵԼ ԲԱՆԺԱՐԻՄՔ

Գեաք և կատաղության կենդանու կծածնի Ալե-ՄԻԶԱԳԵՍ փախողը կայսն, վորովների վորքուն շուտ սկսվի բուժութքը, այնքան մեծ հույս կա, վոր կծածը չի վանդառու, ընդհակառություր, բժշկությունն ու շանութիս՝ սրբակումները չեն ոպնում և կծածը կարող և կատաղել:

Կոտամդղած շան կոմ մի այլ կենդանու կրծերու գեապքում՝ չոփեաք և բակ գանուպան մարդկանց, չոփեաք և համառակ ու դիմել գանուպան «նեա» դնուղներին, աղոթքով բժշկողներին, չոփեաք և շոն դիմել վրայից թոշել, կոմ նրա

մազր պոկել, չպետք է դիմել զանազան սրբա-
թիւ ու վանքերի, ինչպես անում եյին մի ժամա-
նակ և գուցե հիմա յել շատերն անում են, այ-
պետք եւ անհապաղ և անմիջապես դիմել Պատ-
արքան կայան. չմուանալ, վոր յուրաքան-
չյուր ուշացրած որ կարող է ոստիալի հետե-
վանք տալ, մանավանդ, յերը կծած վերքերը
յերեսի ու ձեռքերի վրա յեն, մարմնի այն մտ-
սերում, վորոնք շատ հարուստ են նիրվերնի և
միշտ ել բաց են:

Ի՞՞ՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԱՊՐԵՆ ԲԺՇԿԱԾԱՅՆԵՐԸ

ԲԺՇԿԵԼԻԱ շպետք եւ գործածել խմիչքներ,
ծանր աշխատանքով չպետք եզրազիել և ողետք
և զգույշ լինել մրսելուց, այս բոլորը թուլաց-
նում են հիվանդի կազմվածքը, պահասեցնում
են նրա դիմադրական աժեքը, այդ պատճա-
ռով կծածները, չնայած սրսկումներին՝ զարձ-
յալ հիվանդանում են: Ուշ սկսած սրսկումները
չեն ոգնում: Հիվանդության սկսմելու դեպ-
քում՝ սրսկումները նույնային չեն ոգնում: Հի-
վանդացողն անպատճառ մեռնում և ուստի
կծելուց անմիջապես հետո պետք եւ կատարել
սրսկումները, վոր կծածը չիվանդանա:

Ի՞՞ՆՉՊԵՍ ԿՌՎԵԼ ԿԱՏԱՀԱՐԻԹՅԱՆ ԴԵՄ

Նախ և առաջ պետք եւ իմանալ, վոր յեր-
բեմն կատաղած կենդանիների կծելուց հետո
ուշ են հիվանդանում: Շներն ու կատուները
կծելուց հետո հենց առաջին ամսվա մեջ հի-

վանդանում են, բայց կան դեպքեր, յերբ շու-
նը հիվանդանում եւ ավելի ուշ, որինակ 3-6
ամսեց հետո, իսկ յերբեմն ել ավելի ուշ:

Այդ պատճառով շատ վտանգավոր եւ տանը
պահել կատաղած կենդանու կծած շանը կամ
կատավին, մանավանդ, յերբ շունը կտպած չե,
այլ միշտ ազատ ե: Բացի դրանից, չպետք եւ մո-
ռանալ, վոր հիվանդությունը հայտնվում ե
հանկարծ, բոլորովին անսպասելի և զժվար ե
հարկ յեղած միջոցները ձեռք առնել ժամանա-
կին, վոր կատաղած շունը չկծի վոչ վոքի, կամ
չփախչի տնից և վնասներ չտա ուրիշներին:

Անհրաժեշտ ե ԱՆՀԱՊԱՆ, ՍՊԱՆԵԼ (դըն-
դակահարել կամ դեղել) բոլոր այն շներին ու
կատուներին, վորոնց կծել ե մի վորեե կատա-
ղած կենդանի կամ անգամ կատաղության մեջ
կասկածված կենդանի յերբեք չմոռանալ, վոր
այդ կենդանիները մահացու վտանգ են սպառ-
նում մարդկանց:

Տնային այլ կենդանիների, վորոնց կծել ե
կատաղած կամ կատաղության մեջ կասկածե-
լի կենդանի և վորոնք այնքան վտանգավոր
չեն, վորքան շներն ու կատուները, պետք ե
կապած պահել փակ շենքում մի վորոշ ժամա-
նակ, որինակ՝ ձիերին և կովերին 4 ամսով,
իսկ վոչիսարներին ու այծերին 3. այս ժամա-
նակն ահցնելուց հետո յել այդ կենդանիներին
պիսի պահել հսկողության տակ մի ամբողջ
տարի: Հենց վոր կատաղության նշանները յե-
րեւիան, պետք եւ փակել հիվանդ կենդանուն ե

Հայոտնել անասնաբռժին. յեթե հաստատվի, վոր կենդանին կատաղել է, պետք է անհապալ սպանել նրան և թաղել մորքով (առանց քերպելու) հորի տակ, առնվազն Յ արշին խօրության մեջ:

Թեհ մսի և արյան մեջ վարակ չկա, բայց թքով կեղաստած մորթին քերթելուց կամ դըլինի և վողնուզեղի հատումից շատ հեշտությամբ կարելի յե վարակվել, յեթե ձեռքերի վրա կամ թարմ պլոկվածներ կամ ճանգովածքներ, կամ յեթե դիահատության ժամանակ պատահարաբ կտրվի ձեռքը:

Մի հարց ես կա. շատ գժվար ե իմանալ հաստատապես, թե վո՞ր շունը, վո՞ր կատուն և կծած կատաղած կենդանուց և վորբ վաչուստի պետք ե նախազգուշական միջոցներ ձեռք առնել բոլոր այն չների և կատուների գեմ, վորոնք կատաղած շան յերեված վայրից Ծ վերստ հեռավորության վրա յեն դանիվում:

Այդ ձեռնարկումները շատ կարենը են, ուստի բերում ենք այստեղ ԽՍՀՄ-ի մեջ ընդունված անասնաբռժական կանոնադրության հողվածները կատաղության գեմ պայքարի ժամկեն: Այս բոլորը պետք ե իմանան համայն Միության քաղաքացիները և պետք ե ամեն կերպ աջակցեն նրանց կիրառման:

Հոդ. 32. Կատաղած կենդանիներին սպանել (կ. 3 հոդ. 14):

Հոդ. 33. Կատաղությունից կասկածելի

կենդանիներին ա) չներին և կատուներին սպանել (կ. 3 հոդ. 14):

բ) Մյուս կենդանիներին պետք ե պահել անասնաբռժական հսկողության ներքո (կ. 6, չ. 14) մինչեւ պարզվի նրանց հիվանդություն բնույթը, վորպեսզի կարելի լինի նպատակահարմար կերպով ոգնություն հասցնել այն անձանց, վորոնց կծել են կատաղությունից կասկածելի կենդանիները:

Հոդ. 34. Կատաղած կենդանիների կծածներին--

ա) չներին ու կատուներին սպանել.

բ) մյուս կենդանիներին պահել անասնաբռժական հսկողության տակ (կ. 6 չ. 14), և կանխարգելիչ սրոկումների յենթարկել նրանց:

Հոդ. 35. Այն չներին ու կատուներին, վորոնք կասկածվում են կատաղած կենդանու կողմից կծված լինելու մեջ՝ պահել վորոշ ժամանակ հսկողության տակ (կ. 6 չ. 13). յեթե այդ կենդանիների տերերը կամ նրանց փոխարինողները չեն ցանկանա պահել հսկողության տակ, կամ յեթե չեն կատարի այդ հսկողության պայմանները, այն ժամանակ սպանել չներին ու կատուներին:

Հոդ. 36. Մարդարնակ տեղերում պետք ե բոլոր չներին կապել և չները պետք ե ունենան դնչակալներ: Սպանել այն չներին, վորոնք խախտելով այս կարգադրությունը՝ պատ կլենեն և դնչակալ չեն ունենան:

Այս որենքի կարևորութույնը բղխում է հետեւյալից.—

Մոսկվայի նահանգում կատաղության դեմ պայքարի համար հրատարակված եր պարտագիր վորոշում, վորը պատերազմի և հեղափոխության տարիներում լավ չեր գործադրում և այդ պատճառով կատաղած կենդանիների կծածների թիվը շատ ավելացավ։ Այդ տարիներին Մոսկվայի Պատերյան կայանում ըժշկվել են։

Մոսկվայից

1913 թ. — 1.108 մարդ

1914 թ. — 1.134 »

1915 թ. — 1.072 »

1925 թ. — 3.974 »

1925 թվին ընդամենը բժշկվել են 6628 մարդ։

Կատաղության դեմ տարվող պայքարն այնպես պետք է դնել, վոր չները չկծեն մեկմեծեկու և չտարածեն կատաղություն։ Դրա համար պետք է հետեւյալ, վոր անտեր ու թափառող չներ չլինեն, իսկ մնացածները լինեն կապված և դնչակալ ունենան։


Նման ձեզով պայքարի ոգուտներն ակընհայտ են։

Առաջներում Անգլիայում կատաղությունից ամեն տարի սատկում ելին 200-300 շուն։ 1889 թ. կարգադրվեց, վոր չներն անպատճառ ունենան դնչակալ և 1892 թվին կատաղությունից սատկեցին միայն 38 շուն։ Կատաղած շրեների պակասման պատճառով պակասեց կծած-

ների և կատաղությունից մեռած մարդկանց ու կենդանիների թիվը։ Անգլիական «ազատառիցությունը» չեր կարող հանդուրժել չների դնչակալը և հասարակության մեջ սկսեցին բողոքել չների համար մայրած դնչակալների դեմ։ Չներն ստացան ազատություն և սկսեցին կծել իրար, վարի հետեւյանքը յեղավ այն, վոր 1895 թ. կատաղածների թիվը դարձավ 673։ Ինչ ասել կուզի, վոր չնորհիվ այդ հանդամանքի մարդկեկ տուժեցին։ Ուստի 1895 թ. հրատարակվեց խիստ հրաման, վոր անխնա կերպով պետք է կիրառել դնչակալների մասին հրատարակված որենքը և իրեն հետեւյանք 1898 թ. կար միայն 17 կատաղած շուն, 1891 թվին — 9, 1900 թվին — 6 1901 թվին միայն մեկ շուն։ Այժմ Անգլիայում կատաղություն չկա։

Այսպիսով Անգլիայում հաջողվել է վոչընչացնել կատաղությունը չնորհիվ պարտադիր վորոշաման և նրա կատարման։

Համապատասխան պարտադիր վորոշում հրատարակել են մեր գործ կոմները։ անհրաժեշտ ե, վոր այդ պարտագիր վորոշումը կիրառվեր կյանքի մեջ խիստ կերպով և նման վորոշումներ հրատարակեյին բոլոր գործ կոմները։ Հարկավոր է առանձին ուշադրություն դարձնել դնչակալների վրա, ուստի շանկալիք, վոր բացի առերքեց չներն ունենան նաև դնչակալներ լաւագույն չներն իրար չկծեն ու կատարություն չնազամնեն։



Այստեղ ամելորդ չենք համարում բերել մի
քանի կետեր Յերեվանի Գործկոմի վորոշումից:

ՊԱՐՏԱԴՐՈՒՄ

Քաղաքագում № 28

Քաղաքում շներ պահելու մասին

1. Քաղաքացիներին կատաղած չների
կծելուց ապահովելու համար, Քաղխորհրդի
նախագահությունը վորոշեց:

2. Ամեն մի քաղաքացի, վորը ցանկանուած
է պահել շուն, պարտավոր և մեկ ամալիա ըն-
թացքում վերցնել թույլտվություն Գավչործ-
կոմից և համապատասխան համար Տեղ. Տնաւ-
ության բաժնից:

3. Քաղաքի բոլոր չները, անկախ նրանից,
ազատ են, թե՛ գտնվում են կապած, պետք և
լինեն վզնոցով, վորոնցից կախ են տրվելու
Քաղմիլիցից ստացած համարները:

4. Բակերի չները ցերեկը պետք և լինեն
կապած, գիշերները կարող են ազատ լինել կա-
պանքից, նախապես բակերի արտաքին դռները
կողպելուց հետո:

5. Տնային (անյակի) չներին կարելի յե-
րաց թողնել փողոց, ուղեկցողների հետ:

6. Փողոց դուրս բերած չները պետք և ու-
նենան դնչակալներ:

7. Ա. կետում նշանակված ժամանակա-
միջոցից հետո բոլոր այն չները, վորոնք չեն
ունենա վզնոցներ և համապատասխան համար-

ներ, կհամարվեն թափառական և անկախ
նրանից, թե կհայտնաբերվեն փողոցում կամ
բակերում, անմիջապես կվոչնչացվեն:

2. Սույն պարտագիր վորոշումը խախ-
տողները կյենթարկվեն մինչև 25 ո. տուգանքի
կամ մինչև 10 որ հարկադիր աշխատանքի:

ԱԶԴԱԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒ-
ՆԸ ԿԱՏԱՀՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԵԶ

Վորովեսզի կատաղած կենդանիների գեմ
առաջարկված պայքարի ձեռնարկումները հա-
ջողություն ունենան, անհրաժեշտ ե, վորպես-
զի նրանք կիրառվեն բոլորի կողմից անխտիր:
Ազգաբնակությունը գիտակցելով հասցրած
մեծ վնասները՝ ակտիվ մասնակցություն և ու-
նենալու նրա գեմ տարվաղ պայքարում:


Շատ տգետ անձինք կան, վորոնք թաղցը-
նում են իրենց չներին կատաղած չներից, ծըն-
ված լինելը, անգամ իրենց հարեվաններից և
կամ չեն կապում չներին. ի հարկե, պատճառը
տգիտությունն ե. նրանք չեն հասկանում, թե
կատաղած կենդանին ինչ մեծ վտանգ և ապա-
նում մարդկանց:

Անշուշտ ազգաբնակության մեջ կտն և գի-
տակից տարրեր, վորոնք կազմելով խմբակ-
ներ, յեռանդուն միջոցներ պետք և ձեռք
առնեն կոտորելու անտուն և թափառող շր-
ներին:

Բոլորիս նպատակն է լինելու կազմակերու-
ված պայքար մղել կատաղած կենդանիների

դեմ, վոչնչացնել անտուն ու թափառող շրներին, հսկել վոր չները ցուցակադբիւծ լինեն, վոր ունենան վզկապ, վորից կախված լինի մետաղյա թերթիկից համար, վոր չները կապած պահվեն և գնչակալ ունենան, վոր վոչ վոք վորոց դուրս չբերի Եթ շանն առանց շղթայի ու տուանց գնչակալի, հսկեն, վոր կատաղած կենդանու կամ կատաղությունից կասկածելի կենդանու կծածներին անհասպազ ոզնություն հասցընեն Յերեկանի Պաստերյան կայանում:

Միայն այս կերպ կարելի յէ արժատախիլ անել այդ սարսափելիւթիւններուն թյունը, վորն ահագին վնասներ քօնմանդնեմանց բնորդ կանց:



6968

155-



Бешенство

Госиздат ССР Армении
Эривань

1931